ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/121

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով գնանշման հարցում, կոշկեղենի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.07.2019թ. թիվ 26/26-1/12246-2019 գրությամբ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 16.07.2019թ. թիվ 20/554 գրության հիման վրա, 22.07.2019թ.-ին «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 22.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 29.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 29.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.08.2019թ.-ին:

2. **<u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 16.07.2019թ. թիվ 20/554 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման 45-րդ կետի համաձայն, Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար կոշկեղենի ձեռքբերման նպատակով 04.06.2019թ. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակցի՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

3. **<u>«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 24.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2019թ. թիվ 26/26-1/12246-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/121 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար կոշկեղենի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին և վերջինիս հետ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան կնքել պայմանագիր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Մասնակիցը՝ 12.07.2019թ.-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության «տնտեսական վարչության պետին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի միջև 15.03.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ/3» գնման պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի լուծվել է և այն, որ Վաճառողի կողմից մատակարարված 1184 զույգ կիսաճտքավոր կոշիկները փաստացի գտնվում են Հայաստանի Հանրապետության

ազգային անվտանգության ծառայության պահեստում, ինչի մասին նշված է Ձեր կողմից 29.05.2019թ. թիվ 20/423 և 11.07.2019թ. թիվ 20/539 գրությունների մեջ, հայտնում եմ, որ չնայած այն հանգամանքներին, որ Ձեր կողմից անընդհատ նշվում է որ չընդունված ապրանքը ի պահ է հանձնված, սակայն Կողմերը չունեն պահատվության պայմանագիր և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն համաձայն չէ «ի պահ հանձնված» բառակապակցության հետ և քանի որ Ձեր կողմից 11.07.2019թ. թիվ 20/539 գրության մեջ նշված միակողմանի լուծված պայմանագիրը և նոր կնքվելիք պայմանագիրը նույնականացվում են, որը օրենսդրական առումով չի կարգավորվում, և որպեսզի «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն եր վերցնի իր կողմից հանձնված, սակայն Ծառայության կողմից չընդունված ապրանքը և այլ ելք չունենալով հրաժարվում է կնքել «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏ4-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ/1» պայմանագիրը:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2019թ. թիվ 26/26-1/12246-2019 գրությամբ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը,

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ), պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը, զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին և վերջինիս հետ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան կնքել պայմանագիր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը՝ հրաժարվելով կնքել «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏ4-ԳՀԱՊՁԲ-1/19-ԿՈՇԿԵՂԵՆ/1» ծածկագրով գնման պայմանագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2019թ. թիվ 26/26-1/12246-2019 գրությամբ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**